

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ
ԺԱՄԸ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

- Ա. Ղարիբյան ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական
Վ. Գաբրիելյան ՀՀ ֆինանսների նախարար
Տ. Դավթյան ՀՀ Էկոնոմիկայի նախարար
Հ. Թովմասյան ՀՀ արդարադատության նախարար

Հրավիրվածներ՝

- Դ. Սարգսյան ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ռ. Նազարյան ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնա-
ժողովի նախագահ
Կ. Մինասյան ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Ա. Գալստյան ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի
տեղակալ
Ա. Ալեքսանյան ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Ա. Անդրեասյան ՀՀ տարածքային կառավարման նախարարության
ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Կ. Արեյան Երևանի քաղաքապետի տեղակալ
Լ. Հունանյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտե-
սագիտական վարչության պետ
Ա. Եղիազարյան <<Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն>>
ԾԻԳ-ի տնօրեն
Վ. Պողոսյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսա-
տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Վ. Կտիկյան <<Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն>>

ԾԻԳ-ի տնօրենի տեղակալ

Վ. Չիբուխյան	<<Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն>> ԾԻԳ-ի բաժնի պետ
Ա. Բուդաղյան	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատակազմի լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչության պետ
Գ.Գևորգյան	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատակազմի հեռահաղորդակցության վարչության պետ

1. Հանրային ծառայությունների ոլորտի առաջարկությունների փաթեթի ներկայացում (ջուր, գազ)

(Ա. Եղիազարյան, Տ. Մարգարյան)

10. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանին՝

ա. քննարկել բարձր ճնշման ջրագծի միացման համար թույլտվությունների տրամադրման իրավական նորմերը և ներկայացնել համապատասխան առաջարկություններ,

բ. «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրեն Ա. Եղիազարյանի կողմից առաջարկվող բարեփոխումների շրջանակներում ՀՀ կառավարության 2004 թվականի հունվարի 22-ի N 130-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել որոշման նախագիծ.

2) առաջարկել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Ռ. Նազարյանին՝

ա. գազամատակարարման ոլորտում բարեփոխումներ իրականացնելու նպատակով ներկայացնել համապատասխան միջոցառումների ժամանակացույց՝ ապահովելով մինչև 2014 թվականի հունվար ամիսը գազի ոլորտը կարգավորող իրավական ակտի (ակտերի) ընդունված լինելը,

բ. «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրեն Ա. Եղիազարյանի հետ համատեղ քննարկել գազաֆիկացման ժամանակ քիզնես միջավայրի

համար անվտանգության ծառայությունների մատուցման և իրավաբանական ու ֆիզիկական անձանց ծառայությունների մատուցման համար գնային սակագների տարբերությունն ինչով է պայմանավորված,

գ. մինչև 2015 թվականի հունվարի 1-ը հեռահաղորդակցային ցանցի կառուցումն և շահագործումն լիզենզավորման ենթակա գործունեության տեսակներից հանելու նպատակով կազմել համապատասխան միջոցառումների ժամանակացույց և ներկայացնել ՀՀ կառավարություն,

դ. «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրեն Ա. Եղիազարյանի հետ համատեղ մեկ անգամ ևս քննարկել մասնավոր հատվածին էլեկտրական էներգիայի մատակարարման հոսքազծերի անցկացումը վերջիններիս ցանկության դեպքում իրենց միջոցների հաշվին իրականացնելու թույլտվության հարցը :

2. <<Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն>> ԾԻԳ-ի աշխատանքային պլանի հաստատում

(Ա. Եղիազարյան, Տ. Սարգսյան)

3. Քննարկումներից հետո որոշվեց հաստատել «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրեն Ա. Եղիազարյանի կողմից ներկայացված աշխատանքային պլանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ